Հավելված
ՀՀ կառավարության 2015 թ.
հուլիսի 2-ի նիստի N 31
արձանագրային որոշման

Փոփոխություն թիվ 3

Վարկային համաձայնագրի

Ստորագրված 2010թ.նոյեմբերի 23-ին

Փոփոխված Փոփոխություն 1-ով՝

(Վարկի գումարի չափի 5,374,691.46 եվրոյի չափով ավելացում)

և

Փոփոխված Փոփոխություն 2-ով՝

(Վարկի վերջնական մասհանման ժամկետի երկարաձգում)

Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս

ՀՀ ֆինանսների նախարարության

(որպես Վարկառու)

և

«Քեյ-Բի-Սի» բանկի

(որպես Վարկատու)

միջև

Սույն թիվ 3 Փոփոխությունը ստորագրված է_____ 2015թ. և կատարված է

Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ Ֆինանսների նախարարության, որի գրանցված գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Մելիք-Ադամյանփողոց 1 հասցեում (այսուհետ՝ «Վարկառու».)՝ սույնով պատշաճ կերպով ներկայացված նախարար պրն. Գագիկ Խաչատրյանի կողմից

և

«KBC BANK NV»–ի, որի գրանցված գրասենյակը գտնվումէ Havenalaan 2, 1080 Brussels, Belgium հասցեով, ձեռնարկության համար VAT BE 0460.292.226, RPM Brussels, CBFA 026256, (այսուհետ՝ «**Վարկատու**»)՝սույնով պատշաճ կերպով ներկայացված տիկին Միլենա Բոգերցի և տիկին Վիկի Հոբուրդինի միջև

Քանի որ:

Հայաստանի Հանրապետությունը Էկոնոմիկայի նախարարության անունից (այսուհետ՝ «**Գնորդ**») 2010թ. նոյեմբերի 23-ին 4,808,142 Եվրո (չորս միլլիոն ութ հարյուր ութ հազար հարյուր քառասուներկու եվրո) արժողությամբ (այսուհետ՝ **Պայմանագրի գին**) պայմանագիր է կնքել (այսուհետ՝ «**Պայմանագիր**») «ION BEAM APPLICATIONS SA»–ի հետ (այսուհետ՝ «**Մատակարար**»), որի գրանցված գրասենյակը գտնվում է Avenue Einstein 4, 1348 Louvain-La-Neuve, Belgium հասցեով.

Պայմանագիրը բաղկացած է ռադիոիզոտոպների՝ ցիկլոտրոնի արտադրանքի առաքումից՝ արտադրվող Ա.Ի. Ալիխանյանի անվ. Ազգային գիտական լաբորատորիայի կողմից:

Վարկառուն, Պայմանագրի համաձայն, ցանկանում է ձեռք բերել ֆինանսավորման միջոցներ՝ ֆինանսավորելու համար՝

- Պայմանագրի գնի 95.30%-ը (իննսունհինգ ամբողջ երեսուն տոկոսը), այսինքն 4,581,970 EUR (չորս միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար ինը հարյուր յոթանասուն եվրո) և
- 100% (հարյուր տոկոս) National Du Ducroire (ONDD) գրասենյակի վարկային ապիոովագրավճարը՝ գնահատված 498,659.52 EUR (չորս հարյուր իննսունութ հազար վեց հարյուր հիսունինը ամբողջ հիսուներկու եվրո):

Վարկատուն համաձայն է շնորհել նման հնարավորություններ 2010թ. նոյեմբերի 23-ին ստորագրված Վարկային համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) պայմաններով և սահմանումներով:

2013թ. օգոստոսի 1-ին, Վարկառուն և Մատակարարը կատարել են Պայմանագրի թիվ 2 փոփոխությունը՝ հետևյալ բովանդակությունն ավելացնելու համար՝ 265.200 EUR (երկու հարյուր վաթսունհինգ հազար երկու հարյուր Եվրո) արժողությամբ 1 Vectio Transport Line (այսուհետ՝

Պայմանագրի լրացուցիչ գին), որի արդյունքում Պայմանագրի գինը 4.808.142 EUR-ից (այսուհետ՝ Պայմանագրի իրական գին) բարձրացել է 5,073,342 եվրոյով (այսուհետ՝ Պայմանագրի նոր գին):

Բելգիայի իշխանությունները որոշել են աջակցել այս նախագծին՝ շնորհելով տոկոսադրույքային լրավճար: Վերջինս կազմված է՝

- Բելգիական իշխանությունների կողմից ուղղակի դրամաշնորհ՝ Պայմանագրի գնի 226,172 EUR արժողությամբ (երկու հարյուր քսանվեց հազար հարյուր յոթանասուներկու եվրո)՝ և կանխավճարի բաղկացուցիչ մաս՝ Մատակարարին վճարման ենթակա, ինչպես նաև
- 4,847,170 EUR (չորս միլիոն ութ հարյուր քառաունյոթ հազար հարյուր յոթանասուն) բարձրացնելով մինչև 100%՝ ONDD հավելավճար
- Պահանջվող ֆինանսավորման տոկոսադրույքի մինչև 0% (զրո տոկոս) տոկոսադրույքի կրճատում

Վարկառուն, Պայմանագրի համաձայն, ցանկանում է ձեռք բերել ֆինանսավորման միջոցներ՝ ֆինանսավորելու համար՝

- Պայմանագրի գնի 95.542%-ը (ինիսունհինգ ամբողջ հինգ հարյուր քառասուներկու տոկոսը), այսինքն 4,847,170.0 EUR (չորս միլիոն ութ հարյուր քառաունյոթ հազար հարյուր յոթանասուն եվրո) և
- 100% (հարյուր տոկոս) National Du Ducroire (ONDD) գրասենյակի վարկային ապահովագրավճարը՝ գնահատված 527,521.46 EUR (հինգ հարյուր քսանյոթ հազար հինգ հարյուր քսանմեկ ամբողջ քառասունվեց եվրո):

Վարկատուն համաձայնել է տրամադրել նման միջոցներ 2013թ. հոկտեմբերի 21-ին ստորագրված Վարկային համաձայնագրի թիվ 1 փոփոխության (այսուհետ՝ **Փոփոխություն 1**) պայմաններով և դրույթներով:

Վարկատուն և Վարկառուն 2014 թվականի նոյեմբերի 4-ին ստորագրել են Համաձայնագրի թիվ 2 փոփոխությունը (այսուհետ՝ **Փոփոխություն** 2) վարկի վերջին մասհանման ժամկետը փոփոխելու համար:

Վարկատուն և Վարկառուն ստորագրում են Համաձայնագրի սույն թիվ 3 փոփոխությունը (այսուհետ՝ **Փոփոխություն 3**) վարկի վերջին մասհանման ժամկետը փոփոխելու համար:
Համաձայնեցին հետևյալի շուրջ՝

ԴՐՈՒՅԹ 1 - ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն՝ թիվ 3 Փոփոխությունում, եթե այլ բան նշված չէ՝

1. Դրույթին կամ Ժամանակացույցին հղումը Պայմանագրի Դրույթին կամ ժամանակացույցին հղում է:
2. Դրույթի կամ Ժամանակացույցի վերնագրերը հղումը հեշտացնելու/ պարզեցնելու համար է և չպետք է հաշվի առնվի սույն Փոփոխությունը մեկնաբանելիս
3. Մեծատառերով նշված դրույթները նույն նշանակությունն ունեն ինչ Համաձայնագրում
4. Եզակին ներառում է հոգնակին (և հակառակը)

Եթե այլ բան սահմանված չէ, սույն Փոփոխության մեջ ցանկացած հղում՝
1. «Ֆինանսական Փաստաթղթին» կամ այլ համաձայնագրին կամ գործիքին հղում է ժամանակ առ ժամանակ վերահաստատված, երկարաձգված, համալրված, նորացված/թարմեցված ֆինանսական փաստաթղթի կամ այլ համաձայնագրի
2. «Երաշխիքը» ներառում է հավելյալ երաշխավորություն, մուրհակի երաշխիք և պահանջված երաշխիք, որը անկախ է դրան վերաբերող ցակացած պարտքից
3. «Անձը» ներառում է որևէ անհատ, կազմակերպություն, ձեռնարկություն, ընկերություն, կառավարություն, պետություն կամ գործակալություն կամ այլ խմբավորում (արդյոք ունեն թե ոչ առանձին իրավաբանական անձ)
4. Բելգիական օրենքի համաձայն՝ Օրենքի դրույթը հղում է ինչպես փոփոխված, այնպես էլ կրկին ընդունված դրույթի հղմանը

ԴՐՈՒՅԹ 2 - ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 1-ԻՆ ԴՐՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(i) «Վերջին մասհանման ժամկետ» սահմանումը պետք է փոփոխվի հետևյալ ձևով՝

«Վերջին մասհանման ժամկետ» նշանակում է այն վերջին ժամկետը, երբ մասհանումը կատարվում է 2015թ. դեկտեմբերի 31-ին:
(ii) «Տոկոսադրույքի վճարման միջանկյալ ժամկետ» սահմանումը պետք էփոփոխվի հետևյալ ձևով՝
«Տոկոսադրույքի վճարման միջանկյալ ժամկետ» նշանակում է Մասհանման ընթացքում յուրաքանչյուր տոկոսադրույքի ժամկետի վերջին օրը

ԴՐՈՒՅԹ 3 - ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 9-ՐԴՀՈԴՎԱԾԻ ԴՐՈՒԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(i) Հոդված 9.1 «Ծախսեր և հավելավճարներ» պարբերությունը 4-ը պետք է փոխվի հետևյալ ձևով՝

Հանձնառության վճար

Վարկի չօգտագործված մնացորդի տարեկան 0.35% Հանձնառության վճարը (զրո ամբողջ երսունհինգ տոկոս) և համապատասխանաբար ժամանակահատվածները հաշվարկվում են ստորագրման ժամկետից/օրվանից մինչև Վարկի վերջին մասհանման ժամկետը/ օրը:

Հաշվարկված հանձնառության վճարը վճարելի է հետևյալ մասնաբաժիններով՝

(i) Ստորագրման օրվանից մինչև Վարկի Հասանելիության օրը՝ յուրաքանչյուր հաջորդող 3–րդ ամսվա վերջին օրը՝ թույատրելի վերջին ժամանակահատվածից ոչ պակաս, քան 3 ամիս:

(ii) Վարկի Հասանելիության օրվանից յուրաքանչյուր Միջնաժամկետ Վճարման օրը կամ Տոկոսադրույքի Վճարման օրը, հանգամանքներից ելնելով:

ԴՐՈՒՅԹ 4 - Այլդրույթներ

Սույնթիվ 3 Փոփոխությունը հանդիսանում է Համաձայնագրի անքակտելի մասը: Համաձայնագրի բոլոր այլ պայմաններն ուդրույթները սույն թիվ 3 Փոփոխությամբ չեն փոփոխվում, մնում են անփոփոխ:

ԴՐՈՒՅԹ 5 – ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Փոփոխություն 3-ը ուժի մեջ է մտնում հետևյալ պայմանների նախապես կատարման դեպքում՝

- Վարկառուի և Վարկատուի միջև թիվ 3 Փոփոխության ստորագրում
- Համաձայնագրի 18.1 Դրույթի (ii) պարբերության համաձայն 2.500 Եվրո արժողությամբ փոփոխության վճարի վճարում
- Վարկային համաձայնագրի Հոդված 5.5-ի պարբերություն (b)-ի համաձայն մինչև 10.800 Եվրո արժողությամբ փոխհատուցման վճար
- Լիազորագիրը, ինչպես նաև Վարկառուի լիազորված ներկայացուցիչների ստորագրությունների նմուշները՝ կապված սույն Փոփոխություն 3-ի, Մասհանումների հետ և Համաձայնագրի ներքո Վարկառուին դեռևս չուղարկված երկարաձգմամբ փոփոխված համապատասխան գործիքների հետ:

Եթե սույն՝ Փոփոխություն 3-ի Ստորագրման օրվանից մինչև 2 ամիս սույն՝ 6-րդ Դրույթում սահմանված պայմանները չկատարվեն, Վարկատուն ծանուցման կամ գրանցված նամակի կամ հատուկ սուրհանադակի միջոցով (օրինակ՝ DHL,TNT, FedEx, կայլն) կարող է դադարեցնել Փոփոխություն 3-ը, որը չեղյալ կհամարվի նման ծանուցում ստանալու օրվանից: Չնայած

փոփոխության 3-ի դադարեցմանը, կողմերը համաձայն են, որ փոփոխության վճարները պետք է պահպանվեն և վճարելի մնան և վարկատուի կողմից չկա անվերադարձելիության պահանջ:

ԴՐՈՒՅԹ 6 – ԿԻՐԱՌԵԼԻ ՕՐԵՆՔ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

Սույն՝ Փոփոխություն3-ը ղեկավարվում և գործում է բելգիական Օրենքին համապատասխան:
Սույն՝ Փոփոխություն 3-ի հետ կապված ծագող ցանկացած վեճ կամ տարաձայնություն կարգավորվում է Համաձայնագրի 20-րդ դրութով սահմանված դրույթներով:
Հաշվի առնելով վերոնշյալը՝
Կողմերը, այսպիսով, ստորագրեցին սույն Փոփոխություն 3-ը՝ երկու բնօրինակների պատճեններով՝ յուրաքանչյուր Կողմ պահպանելով 1 ստորագրված բնօրինակ:

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում և պարտադիր է դառնում Վարկառուի համար, և ենթակա է կիրարկման դրա պայմաններին համապատասխան, ըստ դրա կատարման:

Վարկառուի կողմից՝

_____ _____

Վարկատուի կողմից՝

_____ _____